Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
1442

1999

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՄՈՒՐԱՏ-ՌԱՓԱՅԷԼ ՎԱՐԺԱՐԱՆԻ

ՈՐ Ի ՎԵՆԵՏԻԿ

1356.

Լեռ
1442

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՄՈՒՐԱՏ-ՌԱՓԱՅԷԼ ՎԱՐԺԱՐԱՆԻ

ՈՐԻ ՎԵՆԵՏԻԿ

Երկոքին բարեբեղատակ ազգասէրքն և երախտաւորք Սամուէլ Մ. Մուրատ և Եդուարդ Ռափայէլ Ղարամեան՝ վերջ մտածութեամբ մեր Ազգին բարոյական և ուսումնական լուսաւորութիւնը կենդանացընել փափաքեցան։ Այսնպատակաւ վերջանին առատաձեռնութեամբ թողուցին կատակաւ մէյմէկ գումար դրամոց, որոնց եկամտովը հայազգի որբ և աղքատ տղայք ձրի դաստիարակուին. յանձնելով սոյն վարժարանաց բացարձակ հոգաբարձութիւնն և մատակարարութիւնը Վենետկոյ Մխիթարեան Միաբանութեան։ Մուրատեան Վարժարանն՝ի Բատուա հաստատուեցաւ յամին 1834, և ապա փոխադրուեցաւ՝ի Բարիզ յամին 1846. իսկ Ռափայէլեան Վարժարանն՝ի Վենետիկ բացուեցաւ յամին 1836, և՝ի Վենետիկ մնաց ցայսօր, ուր միացաւ այժմ և Մուրատեան Վարժարանն՝ Գաղղիոյ ընդ Բրուսիոյ պա-

ZHOR-ANN.ՏԵՂ
Ա. ԱՄԻՐԵԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ

Գ/1442-Ամ
28. 1445

տերազմին առթիւ, և անուանեցաւ Մուրատ-Ռափայէլ Վարժարան:

Մխիթարեան Միաբանութիւնն անանձնուրիրելի պարտք ճանչնալով իրեն՝ բարերարաց աստուածահաճոյ դիտաւորութեան հաւատարիմ գործադիր ըլլալ արթուն հսկողութեամբ, երկար ատեն քննութեան առնելով ներկայ ժամանակիս քաղաքական դրից փոփոխութիւններն, Ազգին պիտոյից կերպարանափոխութիւնն, և ունենալով իր շատ տարուան փորձն, մեծագոյն օգուտ համարեցաւ և բարերարաց դիտմանը նպաստամատոյց այս երկու վարժարանաց միաւորութիւնը: Արդարև կը յուսանք և այժմէն իսկ կը տեսնենք կրկին օգուտ այս միութենէն. նախ՝ բազմաթիւ ձրիավարժ աշակերտք կարող ըլլալով առնուլ, մեծագոյն օգուտ ըրած կ'ըլլանք որբոց և աղքատաց Ազգիս, և բարերարաց դիտմանը լաւ ևս հասած. և երկրորդ՝ ազգին ներկայ պիտոյից ալ մասամբ ձեռնտու եղած կ'ըլլանք՝ վարժաւարտ աշակերտաց մէջէն ընտրելագոյնները՝ գլխաւորապէս Գաղղիոյ և Իտալիոյ համալսարաններն ու վարժոցները զրկելով, ուր են արդ մեր վարժարաններն, բարձրագոյն ուսմանց, արուեստից և գեղարուեստից պարապելու: Բայց դարձեալ կը կրկնենք թէ բարերարաց գլխաւոր դիտումը՝ նախնական կրթութիւնը ծաւալելն ըլլալով Ազգին մէջ, անոր համար Վարժարանիս առաջին նպատակն ալ նոյնը պիտի ըլլայ, և մեծագոյն այժն անոր վրայ պիտի թափէ:

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆՈՆՔ ՎԱՐԺԱՐԱՆԻՍ

Ա. ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿԱՆՈՆՔ

Քրիստոնէական բարեպաշտ դաստիարակութիւնն ուղիղ բարոյականի մի միայն հիմն ըլլալով, վարժարանիս աշակերտները ամէն կիրակի և տօն օրեր հռովմէական հաւատոց վարդապետութեանց ու բարի վարուց վրայ խրատ և կրթութիւն կը լսեն: Վարժարանիս մատրանը մէջ ամէն օր սուրբ պատարագին առաջիկայ կ'ըլլան, և առաւօտ ու իրիկուն միաբանական աղօթք կը կատարեն. և ամիսը մէյմը սուրբ խորհրդոց կը մերձենան խոստովանելով ու հաղորդուելով. և տաղաւարներուն ու մեծ տօներուն Մխիթարեան Վանաց եկեղեցին հանդիսաւոր Պատարագի ներկայ կը դառնուին:

Քաղաքական խոհեմաբարոյ զգուշաւոր կրթութեամբ աշակերտք կը սովրին հնազանդիլ միշտ քաղաքական և եկեղեցական օրինաւոր իշխանութեանց, և ըլլալ բարեկիրթ և պատուաւոր քաղաքացի այն տերութեանց՝ որոնց հպատակ գտնուած են:

Ժամանակաւ ճշմարիտ ազգասէր ըլլալու համար, այս Վարժարանիս աշակերտները առաջին օրէն պիտի ջանան ճանչնալ, սովրիլ ու յարգել ազգային լեզուն ու մատենագրութիւնը, պատմութիւնն ու աշխարհագրութիւնը, առանց արհամարհելու օտար ազգաց գովելի կամ անտարբեր յատկութիւնները.

մանաւանդ թէ խոհական ընտրողութեամբ հեռուիլ անոնց լաւ սովորութիւններուն, և իրենց անձնական կատարելութեամբն օտարաց ալ սիրելի և պատկառելի ընծայել իրենց ազգը, և ընտանեաց ու հայրենեաց օգտակար ըլլալ։

Այսոնք և այսպիսի սկզբունք աշակերտաց միտքն ու սիրտը գիւրին և անջնջելի կերպով տպաւորելու համար Վարժարանիս Վերատեսչութիւնը մասնաւոր փոյթ ու հոգ ունի, և հեռու կը պահէ յաշակերտաց ամէն տեսակ ինքասակար գիրք, և ուրիշ որ և իցէ մոլորեցուցիչ առիթներ։

Բ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՔ

Վարժարանիս ուսմունքը վեց տարուան մէջ կը լրանայ. վասն որոյ երեք շրջանի բաժնուած է։ Առաջին երկու տարիներուն մէջ, որ է Առաջին շրջան, կը սորվեցուի

Կրօնք. Քրիստոնէական վարդապետութիւն.
Քաղաքավարութեան կանոնք.
Սրբազան Պատմութիւն.
Աշխարհագրութիւն քաղաքական.
Աշխարհագրութիւն բնական.
Հայ, Իտալ. և Գաղղ. լեզուաց քերականութեան առաջին մասն.
Տաճկերէն լեզու.
Թուաբանութիւն.
Հայ, տաճիկ և եւրոպական գեղագրութիւն.

Երաժշտութիւն ձայնական.
Մարմնամարզք։

Երրորդ ու չորրորդ տարիներուն մէջ, որ է Երկրորդ շրջան,

Կրօնագիտութիւն.
Հայ, Տաճիկ, Գաղղ. Իտալ. և Անգղ. լեզուներն հանդերձ ծանօթութեամբք անոնց մատենագրութեանը.
Հին Պատմութիւն.
Ճարտասանութիւն.
Աշխարհագրութիւն վաճառականական.
Գրահաշիւ և Երկրաչափութիւն.
Տիեզերագիտութիւն.
Բնական Պատմութեան առաջին երկու մասերը, այսինքն Բուսաբանութիւն և Կենդանաբանութիւն.
Մեքենականութիւն.
Ուրուագրութիւն.
Հայ, տաճիկ և եւրոպական գեղագրութիւն.
Երաժշտութիւն ձայնական.
Մարմնամարզք։

Հինգերորդ և վեցերորդ տարիներուն մէջ, որ է Երրորդ շրջան,

Կրօնագիտութիւն.
Նոր և ժամանակակից Պատմութիւն.
Հայ, Գաղղ. Տաճկ. և Անգղ. լեզուաց կրթութիւնք.
Գերմաներէն լեզու (եթէ չափաւոր թուով սովրիլ ուզողներ գտնուին).

Եռանկիւնաչափութիւն.

Լրումն Բնական Պատմութեան, այսինքն Հանքաբանութիւն և Երկրաբանութիւն.

Բնագիտութիւն.

Բնաբուծութիւն անգործարանաւոր և գործարանաւոր.

Իմաստասիրութիւն.

Իրաւագիտութիւն քաղաքական, պատժական և վաճառականական.

Կրկնատումար և Պարզատումար վաճառականութեան, հանդերձ ծանօթութեամբք փոխանակագրոց և ծովային երաւանց.

Ուրուագրութիւն.

Դիմագծութիւն.

Երաժշտութիւն ձայնական.

Մարմնամարզք.

Լատին և յոյն լեզուք, համալսարանական ուսմանց արժանի դատուողներուն համար:

Այս ամենայն ուսմունք, լեզուք և արուեստք ըստ պատշաճի սովորեցընելու համար, Վարժարանիս Վերատեսչութիւնն ընտիր ու փորձ և վկայեալ վարժապետներ կը վարձէ. ինչպէս հիմա տասնուվեց օտարազգի ուսուցիչ ունի, բաց 'ի նեղբին ուսուցիչ Հարց:

Երրորդ շրջանի մէն մի ուսմունքը լրացած ատենը, անմիջապէս խիստ և երկար քննութիւն կ'ընդունի նոյն ուսման առանձին, և առաջին կարգի քաջերուն՝ Վերատեսչութիւնն կը շնորհէ մասնաւոր

վկայագիր նոյն ուսման, ստորագրեալ նաև 'ի վարժապետէ այն ուսման:

Բարձրագոյն Դաս.

Բարձրագոյն դասը կը կազմուի Մուրատ-Ռափայէլ Վարժարանին այն վարժաւարտ աշակերտներէն, որոնք յետ կատարելու գովութեամբ երեսնց կրթութեան և ուսմանց ընթացքը, Վարժարանիս երաշխաւորութեամբն ու վկայականաւը, և ընդհանրական մրցանքով (concours) կը մտնեն եւրոպական Համալսարաններն և Բարձրագոյն Դպրոցները, և յաւարտ ուսմանց կ'ընդունին ակադեմական Վկայագիր (Diplôme) և աստիճան: Այլք ալ օգտակար արուեստի մը կը պարապին արուեստական վարժոցաց կամ գործարանաց մէջ, և կամ ճարտարագիտաց քով:

Միաբանութիւնս այս բարձրագոյն դասուն համար առանձնաշնորհութիւն ստացած է Գաղղիոյ Տէրութենէն յամին 1867, որ մեր վարժաւարտ աշակերտքն Վարժարանիս ընդհանուր Վկայագրովը կարենան Գաղղիոյ Համալսարանները մտնել: Այս տարի ալ Իտալիոյ Պետութենէն առանձնաշնորհութիւն ստացաւ, որ մեր աշակերտքն ազատ ըլլան ԺԿ-Նաչի այսինքն Ճարտասանութեան դասուն երեքամեայ քննութիւններէն, և տան միայն Լիկէոնի այսինքն Իմաստասիրութեան դասու քննութիւնը, և կարենան անով մտնալ Իտալիոյ Համալսարանները:

Բարձրագոյն Դասու աշակերտք, թէ և ուս-

մունքին կամ արուեստին Վարժարանիս մէջ ալ չընեն, մանաւոր հոգաբարձութեան տակ են, որպէս զի ուսմունքէն ցնդելու և իրենց սովորական կեանքէն շեղելու առիթներու մէջ չինան:

Չափաւոր ապրուստ ունեցող ընտանեաց աշակերտք եթէ համալսարանական ուսմանց արժանի դառուին, անոնց արտաքին ծախքն ընտանիքը պէտք է տան:

Գ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԱՌՈՂՋԱԿԱՆ ԿԱՆՈՆՔ

Արդարութիւնը կը պահանջէ որ Վարժարանիս մատակարարութիւնն ըլլայ ամենայն կարելի խնայողութեամբ և զգուշութեամբ, և միանգամայն բարեբարաց վերանձնութեանն համեմատ վայելչութեամբ. ուստի մեծ ջանքով կը նայուի որ Վարժարանիս ամէն բաներուն մէջ փայլին զգուշաւոր չափաւորութեան հետ մէկտեղ՝ մաքրութիւն, դիւրութիւն ու լաւութիւն:

Վարժարանիս շէնքին ընդարձակութիւնը, խաղաղաւէտ դիրքը, առողջարար օդը, աղէկ ջուրը, և բարեկարգ կերպով կատարուած ծառայութիւններն՝ այս վախճանիս ինչպէս որ պէտք է համաձայն են:

Իւրաքանչիւր աշակերտ առանձին սենեակն ունի, ուր գիշերները պառկելէն եաև դուռը դրսէն փականքով կը գոցուի. ներսն ամէն հարկաւոր բաները գտնուելէն զատ՝ զանգակ մըն ալ կայ որ պահանջին սենեակը ձայն կու տայ. եթէ յանկարծ

աշակերտ մը գիշերը պէտք ունենայ՝ այն զանգակը կը զարնէ, և պահապանը կ'երթայ անոր դուռը բանայ:

Աշակերտաց Ճերմակեղէնը կամ ներքին հագուստները շաբաթը երկու անգամ կը փոխուին. նոյնպէս կօշիկները: Արտաքին նշանագգեստները երկու տեսակ են. մէկը սև չուխայէ՝ ձմեռուան համար, միւսը գունաւոր թեթև նիւթէ ամառուան համար, որ Վարժարանէն դուրս ու հանդիսի օրեր կը հագնին: Նոյնպէս ալ ներքին զգեստներն երկու տեսակ են. մէկը սև չուխայէ ձմեռուան համար, մէկալը գունաւոր թեթև նիւթէ ամառուան համար, որ առեն առեն ալ կը լուացուի:

Կերակուրներն են սննդարար, փոփոխ, բաւական քանակութեամբ, մաքուր ու վայելչապէս պատրաստուած:

Սովորական տնի և զբօսանաց օրերէն զատ, աշակերտներն ամիս մըն ալ գիւղագնացութեամբ օդափոխութիւն կ'ընեն ու կը հանգչին:

Վարժարանս յատուկ բժիշկ ու վիրաբոյժ ունի, որ ընդհանուր այցելութենէն զատ, կարևոր գիպուած մը պատահելուն պէս խպտն կը կանչուին. և հիւանդութեան պէտքին համեմատ ամենայն խնամք կը տարուի:

Օրուան հանգստեանժամերուն աշակերտք մասնաւոր վարժութիւն կ'ընեն մարմնամարզից, իրենց առողջութիւնը պահելու, բնական ոյժը զարգացնելու, և մարմնոյն գիւրաշարժութիւն տալու համար: Ամառն ալ անուշ և ծովու ջրոյ բաղանիք կը մտնեն:

ԱՇԱԿԵՐՏԱՑ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ա. Աշակերտաց ընտրութիւնը կ'ըլլայ Վարժարանիս Վերատեսչին և անոր գործակալաց ձեռքովը ըստ ժամանակին և ըստ որոշեալ թուոյն:

Բ. Վարժարանս մտնող տղայոց տարիքը տասնէն պակաս ու տասնըհինգէն աւելի պիտի չըլլայ:

Գ. Մարմնով տկար ու հիւանդոտ, կամ բարոյքն ախտաւոր ու մոլի տղան չընդունուիր. անոր համար մկրտութեան վկայականին հետ կը պահանջուին բժշկի վկայագիր ըստ առողջութեան մասին, և վարժապետաց վկայագիր՝ ըստ բարուց մասին:

Դ. Երկու եղբարք 'ի միասին չեն ընդունուիր, բայց եթէ մէկուն տարեկան ծախքը հատուցանելով:

Ե. Վարժարանս ձրիաբար կ'ընդունի զտղայս՝ դպրոց մտնելէն անմիջապէս ետքը. անոր համար ամենայն ընտանիք պէտք է ճարեն և հատուցանեն կանխիկ՝ երեթի և մոլոց ու նշանագրեստուց համար 15 նաբոլէոն ոսկի: Նոյնպէս դարձի համար ամէն ընտանիք պէտք է ջանան հատուցանել ժամանակին՝ 15 նաբոլէոն ոսկի. բայց անկարողէ և անօգնականներէն չպահանջուիր ինչ:

Զ. Ամենէ դուրս իր որդին ետ կանչողը պարտական է գոնէ ամիս մը առաջ Վարժարանիս Վերատեսչին խմացընելու և դարձին ճամբու ծախքը հատուցանելու:

Է. Երբոր տղայ մը ստահակ ու անուղղայ է, Վարժարանիս Վերատեսուչը ամիս մը կամ տասնու-

հինգ օր առաջ կ'խմացընէ ծնողացը, և եթէ հարկ ըլլայ՝ առանց անոնց հաւանութեանը սպասելու ետ կը ճամբէ տղան: Նոյնպէս կ'ընէ երբոր տղայ մը հիւանդոտ կամ անընդունակ ըլլայ ուսման:

Ը. Հարուստի զաւակը կարողութեանն համեմատ պիտի հատուցանէ թոշակ: Նոյնպէս երեթի, մոլոց և նշանագրեստուց համար սահմանուած գումարը, որ ինչպէս վերն ըսուեցաւ՝ է 15 նաբոլէոն ոսկի: Այլ զատ, պիտի հատուցանէ կանխիկ՝ դարձին ստակը հանդերձ ծախքը դարձի զգեստուց, որ է նմանապէս 15 նաբոլէոն ոսկի: Եթէ խնդրեն ծնողք դարձին գումարը ետքը հատուցանել, պէտք է օրինաւոր գրով խոստումն տան: — Բայց 'ի ասոնցմէ, պիտի տան տղուն հարկաւոր հագուստը, ճերմակեղէնն ու մանր պիտոյքը: Եւ տղուն երեթէն երկու կամ իրեք տարի ետքը՝ պիտի ղրկեն քիչ մը ճերմակեղէն, որ կարենան ծառայել տղուն մեծցած հասակին: Դարձեալ պարտաւորեալ են ամէն ամառ 25 ֆրանգ վճարելու՝ կարգ մը թեթև ամէնօրեայ զգեստի համար: — Եւ ասոնք հատուցանելով ալ՝ Վարժարանին ուրիշ տղայոցը նման և հաւասար է թոշակաւորաց արտաքին հագուստը, կերակուրը, բնակարանը, և ամէն վայելքը, և ոչ աւելի:

Թ. Տղու մը տարեկան առաջին կարգի թոշակն է, երեթի և դարձի և մոլոց ու նշանագրեստուց գումարներէն զատ, 65 նաբոլէոն ոսկի. երկրորդն է 60 նաբոլէոն, երրորդը՝ 50, չորրորդը՝ 40, և հինգերորդը՝ 25:

Ժ. Հարկաւոր հագուստն ու ճերմակեղէնն և մանր պիտոյքն ասոնք են.

1 Ֆլանէլ վերմակ.
6 սաւան.
6 բարձի երես.
1 կարդ չուխայէ ամէնօրեայ հասա զգեստ ձմեռուան համար.
2 կարդ ամառնային ամէնօրեայ զգեստ.
4 փողպատ (գրաւատ).
18 շապիկ.
18 վարտիք.
6 ֆլանէլ բաճկոն.
24 զոյգ գուրպայ.
24 թաշկինակ.
3 ֆէս.
6 երեսսրբիչ.
3 զոյգ նոր կօշիկ.
1 պարկ ուղղոյ (լանդա).
1 զոյգ հողաթափ (բանդուֆլ).
2 սանտր.
1 վրձին չուխայի.
1 վրձին գլխոյ.
1 վրձին ակռայի.
1 մկրատ.
1 կտրոց:

Զրկավարժ աղքատ աշակերտաց ծնողքն եթէ կարող չըլլան այս ամէն ճերմակեղէնքն և հագուստը ամբողջապէս հոգալու, կրնան հաւանութեամբ գործակալն Վարժարանիս որ'ի Կ.Պոլիս՝ քիչ մը նուազեցընել անոնց թիւը:

ԺԱ. Թոշակին կէսը կամ վեցամեայն, կանխիկ

պիտի հատուցուի՝ տղուն ճամբայ ելած տեղը: Եւ թոշակը կը սկսի տղուն վարժարանս մտած օրէն: Վեց ամիսը լրացնելուն պէս՝ պիտի հատուցուի երկրորդ վեցամեայն. և այսպէս հետզհետէ:

ԺԲ. Տղայոց դիպուածական հիւանդութիւններն հոգալու պարտքն ունի Վարժարանս, բայց ոչ նոյնպէս հինցած ու բնաւորական եղած հիւանդութիւններն, որոնցմով կը ղրկեն երբեմն ծնողք իրենց որդիքը՝ լուելով ունեցած ախտութիւններն: Այնպիսի տղաքն ետ կը դարձուին. և կամ եթէ ընտանիքը յանձնառու ըլլան ծախքը հատուցանել՝ կը պահուին, եթէ վտանգաւոր հիւանդութիւն չըլլայ:

ԺԳ. Եթէ ծնողք ուզեն որ տղան Վարժարանիս մէջ դաս տրուած ուսմունքէն դուրս մասնաւոր ուսումով մը պատրաստուի Եւրոպական համալսարան մը մտնելու, կամ փափագին որ նոր լեզու մը, գործնական երաժշտութիւն, խաղաներկ պատկերահանութիւն, գիտութիւն մը, արուեստ մը, և այլն, սովրի, պէտք է որ ժամանակին խմացուցեն և եղած ծախքը զատ հատուցանեն:

ԺԴ. Աշակերտաց քով ստակ ամենևին պիտի չգտնուի. և եթէ ծնողք ուզեն ստակ ղրկել որ տղուն համար գիրք և կամ ուրիշ մանր հարկաւոր բաներ առնուին, ստակը Վերատեսչին [illegible] հուի մատնաւոր հաշուեգրքի մէջ [illegible] եղածը ինքը կը գնէ:

Վենտիկ, Յունիս, 187[illegible] 7/31 · 1922

20988
20993
Հ.Ս.Խ.Հ. Հանրային Գրադարան
C.C.P.A. Публичная Б
ՀԱՅԿԱԶՆ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱՄԱՏՈՒՆ
NL0438813

ՄՈՒՐԱՏ-ՌԱՖԱՅԷԼ

ՀՀ Ազգային գրադարան
NL0331433